

էթէ մենք չենք ստանալ ուղիղ, այսպէս անուանուած ձեւոր ասպ-
ցոյց յօգուտ քրիստոնէութեան, այնու ամենայնիւ կունենանք մինն
այն կողմնակի ասպցոյցներէց յօգուտ նորա, որոնք չնայելով իրանց
կողմնակի երեւելուն, մեծ ազդեցութիւն են գործում մեր համոզ-
ման վերայ: Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա (Մատ. Է. 20) ասում է
Յիսուս Քրիստոս և այս խօսքերն են բոլոր մարդկութեան հաստա-
տուն համոզման արձագանքը:

Աչքի առաջ ունենալով մեծ կշիռը քրիստոնէութեան ազդեցու-
թեան խնդրոյն հին ստրկութեան ջնջման գործում, դիտաւորու-
թիւն ունենք ներկայացնել ընթերցողներին նկարագիրը ստրկութեան
վիճակի հին աշխարհում և քրիստոնէութեան բարոյական ու ընկե-
քական ազդեցութիւնը նորա վերայ:

ՅԱՐԺԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

«Բերականական լուծումն» յօդուածի մէջ խոստացել էինք շարա-
գրական վարժութեանց մասին առանձին խօսել, որ և այժմ կատարում
ենք: Քրիդրիկ/Օտոյի գրուածքները այդ մասին մեր ուղեցոյցը պէտք է
լինին, որի մասին մենք շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու:

Շարագրութիւն բառը ընդարձակ մտքով պէտք է հասկանալ. այդ ար-
ուեստը երևում է թէ բանաւոր, թէ գրաւոր և թէ ընթերցանութեան
վարժութիւններում:

Այդ վարժութիւնների գործադրութիւնը ուսման ստորին աստիճաննե-
րում մեզ արդէն յայտնի է (տ. Էայրէն լեզուի դասատուութիւն
ձխական ուսումնարաններում), այժմ աւելի ուսման վերին աստիճանի
ասհմանները քննենք: Մեր ասելիքները վերաբերում են ոչ միայն աշ-
խարհիկ լեզուին, այլ ոչ նուազ նաև գրաբար և օտար լեզուներին:

Սկսենք փոքրիկ ԱՌԱԿՆԵՐԻՑ. Էէնց ստորին աստիճանից աշակերտը
պէտք է սովորէ լաւ ըմբռնել առակի հատ հատ իրօղութիւնները (մա-
սերը) իրանց փոխադարձ յարաբերութիւններով, ապա և կապակցած
խօսքով կամ ոճով արտայայտել ըմբռնածը: Առակի մէջ ճշդիւ պէտք է
որոշուի թո՛ւրի, շո՛ւրի և ի՞նչու, որոնք յայտնի են դառ-
նում մտաւորապէս հեռեկալ հարցմունքների պատասխաններով:

1. Ի՞նչ պատահեցաւ. որի՞ միջնորդութեամբ. ե՞րբ և ո՞րտեղ.
2. Այդ պատահելուց յետոյ՝ ի՞նչ կատարուեցաւ կամ գործուեցաւ.
3. Ի՞նչ հետևանք կամ արդիւնք ունեցաւ գործը:

Մի օրինակով տեսնենք ստորին աստիճանի այս վարժութիւնը:

Գայլ և գառն.

Մի գայլ և գառնուկ պատահմամբ եկան մի և նոյն առուակից ջուր խմելու. գայլն սկսեց առուակի վերեւից խմել, գառնուկը աւելի ներքև ու հեռու նորանից. Հէնց որ գայլը գառնուկին նկատեց, նա առաջ վազեց և կատաղի կանչեց. Ո՞նց համարձակուեցար պղտորել ջուրս: Հիմի ի՞նչպէս խմեմ քո ապականածը. Խեղճ գառնուկը պատասխանեց. Մի՞թէ կարո՞ղ էի ջուրդ պղտորել, քանի որ այս ափին դու ինձնից աւելի վեր ես և աւելի իմ խմածը պէտք է քո շնորհով պղտորուի. Գայլը յարեց. Հերիք չէ արածդ, և անիծ՞ում ես ինձ. Գառնուկը պատասխանեց. Իմ բերանից անէ՞ծք չի դուրս եկել, Էլի գայլը. Այո՛, լաւ միտս եկաւ, վեց ամիս առաջ Տայրդ էլ ինձ անպատուեց, Գառնուկը նորան. Այն ժամանակ ես ծնուած չէի. Տօրս մեղքը ես ինչու պէտք է բարձեմ: Գայլն ասաց. բայց դու իմ գոռոն ու արտը սաստիկ կոխտուել և կոծոտել ես: Գառնուկը պատասխանեց. Այդ անկարելի է, որովհետև ես տակաւին ասամներ չունիմ: Էլ ի՞նչ երկարացնեմ, կտրեց գայլը, հազար էլ որ խօսես ու բարբաջես, այս օր քեզ առանց ուտելու չեմ թողնի. Ասաց և իսկոյն խեղտեց անմեղ գառնուկին:

Հարց ափորձութիւն. Առակի երեք մասերը սորա են. Գայլի ցանկութիւնն է մի յաջող պատճառանք գտնել գառնուկին ուտելու. Գառնուկի վերայ բարդում է ամէն տեսակ մեղադրութիւններ, որոնցից ոչ մէկը խեղճին չի վերաբերուի, նա ուտում է նորան առանց որ և է հիման.

Ի՞նչ զիտաւորութեամբ եկան մի օր գայլն ու գառնուկը առուակի մօտ, ուր որ իրար պատահեցան. Ո՞ր տեղ էր կացած գայլը, ո՞ր տեղ՝ գառնուկը, Ո՞րն է ջրի ափի վերեւը, ներքեւը. Գայլն ի՞նչ յղացաւ իւր մտքի մէջ, երբ որ գառնուկին նկատեց, Բայց նա չէր ուզում ուղղակի ի կատար ածել մտադրածը, չէր ուզում յափշտակող երևալ. ուստի և փնտռում էր մի պատրուակ:

Նախ ի՞նչպէս մեղադրեց գառնուկին, Ի՞նչ բառերով հէրքեց գառնուկը մեղադրանքը. Սորա երկրորդ մեղքը ի՞նչ համարեց, Երկրորդ մեղադրութեան դէմ ի՞նչ պատասխանեց գ. - ը, Ի՞նչ էր նորա երկրորդ ամբաստանութիւնը, Եւ ի՞նչ գ. - ի պատասխանը, Աերջպէս ի՞նչ է անում գայլը, երբ որ չի յաջողում գ. - ին յանցաւոր հանել, Այս էր

Բարաբարութիւն, որ և գայլը կարող էր կատարել, որովհետև դառնուկից աւելի զօրեղ էր. բայց երբ չունէր անելու, Ուրեմն առակը ցոյց է տալիս, թէ ինչպէս ոյժը գայթակղեցուցիչ հանգամանք է ուրիշի դէմ անիրաւութիւն գործելու:

Դա էր ուսման ստորին աստիճանի եղանակը. հետեւեալ առաջներով տեսնենք յատկապէս վերին աստիճանի եղանակները:

Խելօք սարեկը.

Ծարաւի սարեկը փորձում էր մի փարչից ջուր խմել, բայց կտուցի կարճութեան պատճառով չէր կարողանում նորա միջի ջրին հասնել. Մի քանի անգամ կտցով տուեց հաստ կաւին, բայց կտարել չը կարողացաւ. Փարչին դէմ տալով զօր արեց, որ վայր ձգի. բայց ոյժը չը պատեց. Հիմա իւր խելքով ու սրամտութեամբ վերջապէս յարմար հնար մտածեց, քարի կտորներ հաւաքեց և ձգեց փարչի մէջ, որով ջուրը այնքան բարձրացաւ մինչև որ կտուցով կարողացաւ հասնել ջրին և իւր ծարաւի պապակը կտրել:

Մի դանդաղիւր ուսման մէջ, որքան որ դժուար ևս թուի քեզ, իւր անդադար ջանասիրութեամբ մարդ հասնում է մտադրած նպատակին:

Հիմնական գաղափարի լուսաբանիլը, Առակը պատկերացնում է այն փորձառութիւնը, թէ անհնջ կտորով ինչպէս արեցին, որ ինչպէս է նպատակին կտրել, և խրատում է, թէ նպատակին դիմելու ժամանակ չը դիտէ յոյսի արդիւններէն և դժուարութիւններէն, Արդ աշակերտները պէտք է այս իմաստը հասնեն առակից, բայց դորա համար հարկաւոր է, որ հետեւեալ կէտերը խօսակցութեան նիւթ դառնան. մի նպատակ, ձըգտում դէպի նորա, արգելքներ՝ որոնց հանդիպում է հետամտութիւնը, խելքի գործակցութիւն, նպատակին հասանիլը:

Այդ խնդրի կատարումն, Իբրև նախաշաւիղ աշակերտին պէտք է հաղորդուի, թէ ի՞նչ է առակը, ի՞նչ նպատակի է ծառայում, և ի՞նչ պէտք է լինի հետեւեալ զրուցատրութեան խնդիրը:

Երևակայութեամբ փոխադրուենք մի պարտեզ: Այն տեղ տաղաւարի մէջ սեղանի վերայ դրած է ջրով մի փարչ: Ծառի վերայ նստած է մի օսարեկ, որ խիստ ծարաւ է: Յանկարծ նկատում է փարչը և իսկոյն դէպի տաղաւարն է թռչում, որպէս զի փարչի ջրով կտրէ իւր ծարաւը: Այս նպատակի համար հարկաւոր էր, որ սարեկը գար ջրի մաս:

Այն տեղը, ուր որ գալ ենք ուզում, այն իբր, ինչ որ ուզում ենք

ձեռք բերել այն վիճակը, որի մէջ որ ուզում ենք գտնուել. — կոչուած է նորոգել: Ով որ ճանապարհորդում է, ունի մի նպատակ, Ինչպէս իտալացուց ազգի նպատակը, երբ որ Եգիպտոսից ելաւ. Ի՞նչ է այն գրեթեակի նպատակը, որ որտորը Տրացանից արձակուած է, Ի՞նչ է բանաստեղծալի նպատակը, որ աշխատում է ազատութիւն ստանալ: Ի՞նչ նպատակի եմ դիմում, երբ որ ձեզ սովորեցնում եմ: Ո՞րն էր սարեկի նպատակը. — Մէկը գուցէ -- զնայ, հասնիլ մի նպատակի, բայց ոչինչ չը ձեռնարկէ հասնելու համար. հետեւեալն ի՞նչ կը լինի, Եթէ ուզում է նպատակին հասնել, նորա փափազը պէտք է հետադարձել. յիշում գտնուցու աշգպէս էլ կը լինի, եթէ մի և նոյն ժամանակ -- յիշի բան յեռնարի, ինչ որ նպատակին է առաջնորդում: Ուրեմն ինչո՞վ փափազը ճիշտ և հետադարձել է գտնում: Արդեօք սարեկը լոկ միայն ջրի փափագ ունէր, Եթէ հետամուտ ևս եղաւ, նա ի՞նչ ձեռնարկեց ջրին հասնելու համար:

Մի նպատակի ձգտելու ժամանակ կարող է մի բան որմ կնի կամ իտալացուին: Ինչ որ նպատակին հակառակ է, նորա ճանապարհը փակում է, այն որքան է, Բեզ ի՞նչ կարող է խանգարել, որ ծառի վերայ բարձրանաս, ձի հեծնես, կրակ վառես, Աստիկի ո՞ր ձեռնարկութիւնները, արգելքի հանդիպեցան և երեք դեպքերից իւրաքանչիւր անգամ ի՞նչ էին դռքաւ:

Երբ որ մեր ձգտմանց ժամանակ արգելքների ենք հանդիպում, մեր առաջ բացվում է երկու էլք, որոնք են. Ի՞նչ էլք ունեցաւ սարեկի ձգտումը, Ով որ մի նպատակի դիմելիս, բոլոր արգելքների հակառակ շարունակ հետադարձ է, իւր ջանքերով յորտէ է, իւր ձգտումներից չէ յոյնում, նա հարստան և անյողոր է ի նպատակին հետեւելու մէջ: Այսպէս էր և սարեկը, նորա չորս նախաձեռնութիւններից իւրաքանչիւրը՝ այդ բանի ապացոյց է, սակայն առաջին երեքը ցոյց են տալիս, Եթէ միայն անխոնջ աշխատութիւնը բաւական չէ նպատակին հասնելու համար: Այլ հարկաւոր է, որ ձեռնարկածը պարտաւ և յորտէ լինի, այս կերպ ընտրութիւն անելու համար՝ պէտք է մտածել, բայց նախ և առաջ պէտք է խելօք լինել: Հիմա չէք դժուարանայ ստել, Եթէ առակը ինչ գաղափար է պատկերացնում դիմօք, Ընդհանրացրու առակի մասնաւոր խրատը (նպատակին ձգտելու ժամանակ մի ծուլանար, մինչև անգամ եթէ ճանապարհին արգելքներ հանդիպին):

Արդ այս զրուցատրութիւնները ո՞ճով ձևակերպեցիք, ամբողջ շարքութեամբ բացատրեցիք, և մի առ մի պատմեցիք, Եթէ ինչ էր սարեկի նպատակը, Եթէ նա այդ բանի հետամուտ էր, Եթէ նորա դեմ արգելքներ ելան, Եթէ նա արգելքներից չը վճատեցաւ, և չը յորձեցաւ, Եթէ իւր խելքից խորհուրդ հարցրեց և ստացաւ, որի գործադրութեամբ ևս նպատակին հասաւ:

Աղուէս եւ խաղող.

Պոպատանը աղուէսը զուր դէս ու դէն մանգալուց յետոյ յանկարծ տեսաւ մի վազի ծառ և նորա գլխի մասններից կախ ընկած սիրուն քաղցր ողկոյղներ: Երկար ժամանակ փորտող վեր ու ներքև արեց և մտածում, գլուխն էր կտրում, փորձում էր, թէ ինչ անէ, որ ողկոյղներին հասնի: Բայց ափսոս, նոքա բարձր և անմատչելի էին: Սակայն որպէս զի չորս կողմից նայող թռչունները իրան ծաղր ու ծանակ չանեն, նա արհամարհ կերպարանք շինելով տեղից հեռացաւ և գոչեց. « խաղողը հասած չէ. չեմ ուզում ատամներս փչացնել ժանի թթուութիւնից »:

Բողբանդա կու թեան բացատրութիւն: Բննելով պէտք է իմացուի, թէ աղուէսին ինչ էր դրդում սողալ վազի ծառին մտնելու ժամանակ ինչ հնարներ փորձեց. որ ողկոյղներին հասնի, և ինչպէս քննեց թռչունների ծաղրից զերծ մնալու: Ամբողջութիւնը կենդանացնելու համար բարեք է, որ պատմութեան եղելութեան համար մի տեղ և ժամանակ սահմանենք, իսկ հանդիսատես թռչուններին էլ որոշ անուն տանք:

Կատարումն: Ճարուայ որ եղանակին է պատահել այն, ինչ որ առակի մէջ պատմուած է աղուէսի մասին: Լրացած բացատրութիւն տուեցէք այսպէս: Աղուէսը եկաւ վազի ծառին, որ ծանրացած էր քաղցր ողկոյղներով: ողկոյղը քաղցր կը լինի, երբ որ խաղողը բոլորովին հասած լինի: հասած խաղողը միայն աշունքին է լինում. ուրեմն առակի դէպքը աշունքին է պատահել: — Թէ տեղեկանանք, թէ աղուէսը իւր որսը որոնում է աւելի գիշեր ժամանակ, արդեօք պատմուած դէպքը օրուայ որ միջոցին որսորդ է կատարուած լինի: Այսպէս պատասխանեցէք: Որովհետև աղուէսը առհասարակ գիշերն է փնտռում իւր որսը, ես ենթադրում եմ, թէ պատմուած դէպքն էլ . . . — Ո՞վ կարող է ապացուցանել, թէ այդ գիշերը չէր կարող որսորդի կամ որսորդի լինել:

Որովհետև աղուէսը կարողացաւ ինչպէս բարձրից կախ ընկած ողկոյղները նայպէս և իրան նայող թռչուններին նկատել, — այս հանգամանքներից ես եզրակացնում եմ, թէ այն գիշերը անշուշտ . . . Մենք մինչև անգամ ասենք, թէ այդ եղելութեան ժամանակ երկնքում լուսնիակ է եղել: — Ես այնպէս եմ կարծում, թէ աղուէսի տեսած վաղը ու թէ այգու մէջ էր այլ կամ պարտիզի մէջ բարձր գլուխը (*): վերայ սփռած:

(*) Գ. Հեղինակը երբևէ կամե՞նում է անել Թատուանը ասում նշանակում է նախագալից: Ժամանակացի? այդպէս ընդ որի ծաղրամանուս զո ջրակայանից

կամ մի շէնքի պարհի կռթնած և այնպէս դէպի վեր ծաւալած (այգիներու մէջ վազը գրեթէ գետնի վերայ է փռուած)։ Ինչից եմ իմանում այս բանը։ Առակն առում է ողկոյզները բարձր անմատչելի էին։ Ուրեմն վազը վեր և երկար ձգուած էր, հետեւապէս կամ տալանի կամ պատի յենարան պիտի ունենար։—Ես ենթադրում եմ դարձեալ թէ վազի տեղը արդէն քանակն մտն էր։ Ինչից յայտնի է այս հանգամանքը։ Աղուէսը Իրանի վերուստի ընկած արեց։ Անշուշտ այսպէս գողունի վարուելու նպատակը այն կը լինէր, որ շուրջ չը հանէ և իւր գալուստը մարդկանց ու պահապան շներին յայտնի չը կացուցանէ։ Նա սողալու կարիք չէր ունենայ, եթէ մօտը մի դատարկ ամբարանոց կամ պարտիզպանի անմարգաբնակ խրճիթ լինէր։—Սովի հալածանքը աղուէսին հանել էր իւր որջից։ Ուրեմն նորա գլխի մէջ ի՞նչ միտք պէտք է յղանար, երբ որ տեսաւ ողկոյզները։ Սորանից աւելի համով կերակուր էլ ի՞նչ ես ուզում, կասէր նա իւր սրտում։ Բայց փափագին հասնելը հեշտ չէր, որովհետեւ բաժանող բարձրութիւն կար։ Ինչե՞ր պէտք է փորձէր խաղողին հասնելու համար։ (Երեւի բազմիցս և անյաջող կերպով ուստոսել, մագլցել)։ Ի՞նչ են ուզում ասել բայց ափսոս ըստերը։—Թռչունները տեսնում էին նորա արարմունքները։ Ո՞ր արարմունքները, նոքա ի՞նչ Թռչուն կարող էին լինել (գիշեր ժամանակ ըստեր)։ Այս Թռչունների ծաղրից երկիւղ էր կրում։ Ի՞նչ հիմք կար վախենալու համար, նա հռչակուած է իւր խելքով և խորամանկութեամբ։ Իսկ այս անգամ անյաջող հանդիսացաւ։ Ուրեմն այն Թռչունները, որ հարկաւ նորա բարեկամներից չէին լինի, բաւական պէտք է զուարճարանէին աղուէսի դժբախտութեան մասին։ Եւ ի՞նչ կը լինէր ծաղրարանութեան իսկական նիւթը։—Աղուէսը երկու հնար է գործ դնում, Թռչնոց ծաղրին տեղի չը տալու համար։ Ո՞րոնք են, Ի՞նչ է արտայայտում նորա դէմքը, ի՞նչ է նորա ըստերի զօրութիւնը։ Բայց նա չէր արհամարհում խաղողը, այլ իրօք փոփոք էր։ Ուրեմն նորա դէմքն ու խօսքը համեմատ չէն սրտի ուղածին, այսինքն նա կեղծ յեղանակ։ Եւ ի՞նչ նպատակով Թռչուններին հասկացնելու իբր թէ իւր խաղողից հեռանալու պատճառը խաղողի անհամութիւնն է։ Ուրեմն նա ուզում էր Թռչուններին մոլորեցնել։—

Այժմ աշակերտները պէտք է բնակուին կամ Իրանի կերպով առակի բովանդակութիւնը այսպէս ճոխացնեն։

Աշուն կէս գիշերին, մինչդեռ լուսնի պայծառ լոյսը ամեն տեղ սփռուած էր, մի սոված աղուէս գուրս եկաւ սարի լանջի անձաւից, որ նորա որջն էր կաղմում, իւր բոլոր հնարագիտութիւնները պէտք է գործ դնէ, որ կուշա փորով վերագառնայ, նա ուղղուեցաւ դէպի վաղածանօթ բնակութիւնը, որ առանձնացած գիւղից գուրս հաստատուած էր։ Հէնց

որ սողալով հեռուից այդ տեղերքին մտեցաւ, նայեց պատի վերայ վերցցուած վազի ծառին և ուրախութեամբ տեսաւ, որ նորա գլուխը վերեւից ծանրացած է քաղցր քաղցր ողկոյղներով: Ահա համեղ ճաշդ ինքնուիքը մտածեց աղուէսը և առանց շշուկ հանելու, կամաց կամաց մտեցաւ վազին, Եթէ ուզենաս մի թուիչք անել, կը հասնես: այս էր նորա առաջին խորհուրդը: և իսկոյն, ինչքան ոյժ ունէր, ոտանեց և ոտանեց. . . մի, երկու, երեք անգամ, բայց ի զուր: Անաս չը կայ. քաջալերեց ինքն իրան, մագլցելու շնորհք էլ ունինք: Սակայն և ոչ բազմիցս մագլցելը հասցրեց նպատակին: Արդէն այսքանը անտանելի տանջանք էր նորա համար: Բայց տես, որ չորս կողմը հանգիստտեսներ կային: Մտտիկ ծառերի վերայ նստած՝ բազմաթիւ բուեր չարագուշակ նայում էին իրա արարմունքների վերայ, Աստեցաւ, թէ սոքա կսկսեն ծաղրել, Եւ որպէս զի տեղիք չը տայ, հեռացաւ խաղողից արհամարհութեան դեմք շինելով և թռչունների ակտնջին հասցնելու համար՝ բարձրաձայն գոչելով. «Չեմ ուզում այդ խակ ու թթու պտուղները»:

Ազուա հւ աղուէս

Մի ագուա իւր մագիչների մէջ բռնած տանում էր թունաւորած մսի կտոր, որ բարկացած պարտիզպանը շպուտել էր իւր դրացու կատունների համար: Հէնց որ նա կաշնու ծառի գլխին պատրաստուեցաւ իւր կերակուրն ուտելու, մի աղուէս քսմտուելով լուս ընկաւ և տակից շողջորթելով ձայնեց. «Ողջոյն՝ քեզ, Արամազդի թռչուն: Այս ինչ ուրախութիւն է սրտիս, որ քեզ տեսնում եմ, որովհետեւ քո փետուրների գեղեցկու թեան, քո կտուցի ուժին՝ չի հասնի անշուշտ և ոչ մէկը քո եղբայրակիցներից: Այո՛, իրաւամբ միւս բոլոր թռչունները քեզ են սպասաւորում. Ցես, օր ու գիշեր այսպէս կարող եմ կենալ, քեզ նայել, հիանալ քեզմով, սքանչանալ, և էլի չը կշտանալ սիրուն տեսքովդ: Ջարմացաւ ագուաւը և իւր սիրտը խնդաց, որ իրան արծուի տեղ ընդունեցին: Արժան է աղուէսը, մտածեց նա, որ վարձատրեմ իւր փառաբանական խօսքերի համար, Յիմար մեծահոգութեամբ վար ձգեց նա իւր աւարը և հպարտացած թռաւ տեղից: Աղուէսը քրքիչ հանեց և դունչը բաց՝ առաջ վազեց, որ հրապուրած միւր առնի: Եւ սկսեց չարախնդութեամբ քրրիւլ և լսփել: Սակայն շատ չը տևեց և այդ ուրախութիւնը արտմութեան փոխուեցաւ. թոյնն սկսեց ներգործել և աղուէսի օրը սևացաւ:

Երանի, թէ դուք, ո՞վ անամթ շողջորթներ, միշտ միայն թոյն՝ և աւելի ոչինչ չը վաստակէք:—

Անմիջական ըմբռնումն, Աշակերտները ստորին աստիճանից պէտք է սովորեն նախ և առաջ պատմածը անմիջապէս նոյնութեամբ ըմբռնել և այնպէս կրկնել: Բայց սորա համար էլ փոքր ինչ նախապատրաստութիւն է հարկաւոր: Չոր օր մեր օրինակին գալով կանխաւ պէտք է բացատրուի Արամազդի թռչունն, լուս ընկնել մի բանին չը հասնել, հիանալ, սրանչանալ, տեսքով կշտանալ, օրը սկսացաւ:

Բացայայտութիւնն էր իմաստը աւելի լաւ ըմբռնել տալու համար: Մի անտան, որ մացառ ունի, մացառոտ անտան է, մի պտուղ որ հիւթ է պարունակում, հիւթալի պտուղ է, մի բոյս, որ թոյն է բովանդակում, թունաւոր բոյս է: Միւր թոյն էր բովանդակում, ուրեմն թունաւոր էր: Բայց ինչո՞ւ է ասած: «Թունաւորած»: Բառը այդ կերպով այն միտքը ևս ակնարկում է, թէ մնի մէջ թոյն էր խառնուած յատուկ գիտմամբ: Ինչո՞ւ «բարկացած» և ոչ «բարկացաւ» պարտիզպան: — Բարկացաւր ամեն թեթեւ պատճառով բարկութեան կրակով է վառվում: Իսկ պատմութիւնը այն չի ուզում, այն թէ պարտիզպանը իւր բնութեամբ դիւրարորաբ մարդ էր, այլ թէ նա մնի մէջ թոյն խառնելու խօսակ դժկամակ, սրգողած կամ զայրացած էր, և այդ սրտով միւր գուրս ձգեց կատուների համար: Երևի թէ կատուները վնասել էին նորան: Ինչո՞ւ չի ասուած (միւր) Դրել էր: Սրամտած ժամանակ հանգիստ ձեռքով շին գնում, այլ ակամայ դուրս են ձգում, շղապում են, Ինչո՞ւ համար հեղինակը կացով չի ասնել ալիս ագուաւի բռնած միւր: Այն ժամանակ ագուաւը կը թունաւորուէր, որ հեղինակի խորհրդեան հակառակ է: Ի՞նչ էր աղուէտի դիտաւորութիւնը որ քսմունելով մտանցաւ: Որ ագուաւին չը վատեցնէ, ապա թէ ոչ ագուաւը տեղից կը շարժուէր, հետու կը թռչէր, այն տեղ իւր կերակուրը ուտելու: Բայց ինչո՞ւ աղուէտի ձաւը ագուաւի սրտի մէջ երկիւղ չը ձգեց, նորա բարեկամական, քաղցրաբարբառ ձայնը սիրա տուող հնչիւններ էին: — Ասա այն բոլոր «...»-ները, որ աղուէտը ագուաւին ուռցնելու շարժ է: — Ի՞նչ է նշանակում «շալլում» է: Այն թէ ագուաւը փառաբանուեցաւ չունեցած առաքինութիւններով, տարապարտաց: Այդ անաւելութիւններից աղուէտը հանում է երկու ելջալ-յալիս, Թուփր, որոնք են: — Մէկը ագուաւի եղբայրակիցներին է վերաբերում, միւրը աղուէտին: Մի անգամ եղբակացում է, թէ ինքնին հասկանալի է, արժան և արդար է, որ միւս թռչունները պէտք է ծառայեն ագուաւին, այդ բանից էլ իրա համար եղբակացնում է, թէ չի կարողանում կշտանալ ագուաւի տեսքով և ագուաւից գրանչանալով: — Ասա, թէ Ի՞նչ կարգի ուրախութիւն էր ագուաւի ուրախութիւնը, և Ի՞նչ էր նորա ուրախութեան արարկան: — Ի՞նչ վճռեց ագուաւը և ի՞նչ էր վճռի գիտաւորութիւնը: — Ո՞վ էր մուրումնաբեր, Ի՞նչ էր ագուաւի մուր-

բութիւնը: Հաստատիր այս կարծիքը, թէ ազաւը յիմար էր:—Նա չէր հասկանում, թէ աղուէքը նորան խարել է ուղում: Ինչո՞վ է երևում նորա մեծահոգութիւնը, նորանով, որ իւր սխերիմ թշնամի աղուէսին մի տուրք պարգևեց: Ի՞նչից է ծագում այդ մեծահոգութիւնը, ազաւի յիմարութիւնից: Էլ ի՞նչ է ծնանում նորա յիմարութիւնը նորա հպարտ սիգաճեմութիւնը: Առ հասարակ հպարտութիւնը յիմարութեան հետ է զուգակցում: Ի՞նչով աղուէսի ուրախութիւնը լուսնիութիւն էր: Չարակամ ուրախութիւնը կամ վնասասիրութիւնը մի ուրախութիւն է ուրիշի վնասի համար, մանաւանդ եթէ վնասը պատճառել է ինքը ուրախացողը:—Որո՞նք են թոյնի ներգործութիւնները, նախ ցաւեր ու տանջանք, ապա մահ:

Ի՞նչ է մաղթվում անամօթ շողջորթներին:

Ընթերցանութեան եղանակ: Աղուէսի խօսքերը պէտք է կարդացուին հեղիկ ելևեջներով, մեղմ քաղցր և մտերմական ձայնով: Ազաւի խօսքերը պատմական կտորից աւելի խոր և ոչ այնքան բարձրաձայն պէտք է կարդացուին: Վերջաբանութեան բառերը վառվռուն և աշխոյժ եղանակով, անամօթ, բառը չը շեշտել, որովհետև աւելի զարդ և պարայ աւելորդարանութիւն է: Քսն նոր իմաստ որոշող մի բառ: Շողջորթը արդէն ինքնին անամօթ է և չի կարող պատկառանք ունենալ:

Մուկ ևւ առիւծ:

Մի առիւծ քնած էր իւր որջի մէջ, և նորա չորս կողմը խաղում էր մկանց ցնծացող խումբը: Սոցանից մէկը ամեն տեղ ծակ ու մուտ անելով բարձրացաւ մի դուրս ցցուած ժայռի վերայ, վեր ընկաւ այն տեղից, զարթեցրեց առիւծին և նորա ամեն հի թաթի մէջ բռնուեցաւ: «Աւա՛ղ, աղաղակեց նա, իմ խեղճ և շնչին արարածիս համար խնդրում եմ մեծահոգութիւնդ: Ես քեզ նեղացնել չէի ուզում. ես միայն սխալ ոտիւն գործեցի և ժայռի գլխից այս տեղ ընկայ: Քեզ ի՞նչ օգուտ իմ մահը: Պարգևէր կեանքս, և ես մինչև ի մահ չեմ մոռանայ շնորհակալիքս: «Գնա՛, մեծահոգութեամբ ասաց առիւծը, և բաց թողեց մկան: Իսկ իւր սրտում ծիծաղեց և ասաց. «Ընմ՛ մոռանայ . . . կուզէի տեսնել, թէ մկան կտորը ինչով պէտք է առիւծին հաստատէ իւր շնորհակալութիւնը:»

Մի առժամանակ անցնելուց յետոյ նոյն մուկը վազվազում էր անտառում կաղիններ քաղելու համար: Եանկարծ լսեց մի առիւծի աղիողորմ մուռնչ: «Նա վտանգի մէջ է,» ասաց իւր մտքում և այն կողմը քնաց, որ տեղից որ մենչող աղաղակն էր գալիս: Տեսաւ, որ իւր մեծահոգի առիւծը

պինդ խճողուել է մի ամուր ցանցի մէջ, որ գաղանին բռնելու համար որսորդը թափարդ էր դրել: Ձուանները այնպէս արուեստով ոլլած էին, որ առիւծը նոցանից ազատուելու համար՝ էլ չէր կարողանում շարժել ատամները կամ գործածել թաթերի զօրութիւնը:

«Համբերի՛ր, բարեկամս», ասաց մկան կտորը, «ոչ որ չի կարողանայ քեզ ինձանից աւելի լաւ օգնել»: Մտաւ մէջը, կոծոտեց այն չուանները, որոնք որ գաղանի թաթերը կաշկանդել էին. թաթերի ազատուելուն պէս՝ մնացած ցանցը ինքը առիւծը կտրատեց, և այսպէս փոքրիկ մկուկի ձեռքով ստացաւ իւր ազատութիւնը:

Ընթերցանութեան եղանակ. Առակը հարուստ է խօսակցութիւններով: Դա լաւ առիթ է ընթերցանութիւն սովորեցնելու համար: Առաջին խնդիրն այն է, որ աշակերտը հեղինակի պատմածները՝ առիւծի և մկան ասած խօսքերից գիտակցաբար զատէ և անջատէ, ապա ուսուցչի կարգացածի օրինակով լաւ որոշէ պատմական դէրուարէ ձայնը և զանազան հանգամանքների համեմատ՝ քիչ թէ շատ բնութագրէ ձայները. վերջապէս իւր կարգացածը այդ օրինակին նմանեցնէ: Ընթերցանութեան վարժութեան մէջ աշխուժութիւն մտցնելու համար լաւ է, որ պատմողական մասը Վ աշակերտ յանձն առնի, իսկ դէմքերի խօսակցութիւնները ամբողջ դասատունը խմբով կարդայ:

Բացայայտութիւն և կենդանացումն հարցմունքների և խնդիրների միջոցով ընթերցանութեամբ: (Հարցմունքների պատասխաններն ու խնդիրների լուծումը ստորև կերևայ, որ տեղ որ առաջ ենք բերում՝ ամբողջ ընդարձակ նկարագրութիւնը):

1 Ո՞ր տեղ էր գտնվում առիւծի որջը:

2 Քուներ յողնութեան հետեանքը. առիւծի յողնութեան հաւանական պատճառները որո՞նք կարող էին լինել:

3 Նա ինչո՞ւ համար էր քաշուել իւր որջը:

4 Մկները խաղում էին առիւծի չորս կողմը, իսկ նա նոցա չարութիւններից չզարթնեց. ինչ կարող ենք հետեացնել այս հանգամանքից:

5 Ի՞նչ կապ կայ խաղի և ցնծութեան մէջ:

6 Մկները խաղում էին գաղան առիւծի մօտ տեղերում. այս բանից ի՞նչ կարող էք հետեացնել նոցա վերաբերութեամբ:

7 Անշուշտ առիւծի մօտերքում խաղալը վտանգաւոր էր. բայց ի՞նչ է պատճառը, որ նոքա այդ վտանգը չը գիտէին կամ առ ոչինչ էին գնում:

8 Յոյց տուր, թէ մուկը ցնծութիւնից անխոհեմ համարձակութիւն է ստանում:

9 Վերևից ընկնող մկան երևակայութեան մէջ որպիսի թշուառու-

Թիւն պատկերացաւ. և ո՞րքան ստոյգ էին գուշակած երկիւղները:

10 Ի՞նչ ենթադրութիւններ են ծածկուած մկան աղաչանքի մէջ:

11. Մուկը զանազան բացատրութիւններով առիւծին համոզել է ուզում: Ո՞րպիսի:

12 Առիւծը անհաւատալի համարելով նորա խոստումների վերայ ծիծաղում է: ուրեմն նա ի՞նչ փորձեր չի փորձել իւր կեանքում:

13 Առիւծի անզգուշութիւնից ի՞նչ է պատահում:

14 Առիւծի աղաղակից մուկն ի՞նչ իմացաւ:

15 Այդ ժամանակ ի՞նչ յիշեց:

16 Ի՞նչ խրատ կը հանուի առակից:

Բացայայտութեանց համեմատ՝ ընդարձակագոյն նկարագրութիւն: Այն որջը, ուր որ առիւծը քնած էր մի ժայռի մէջ էր գտնվում: Քունը յոգնութիւնից է առաջ դալիս: Առիւծը յոգնած էր թերեւս մի կուռից, ուր նա յաղթութիւն էր տարել իւր թշնամու դէմ, կամ զօրեղագոյն հալածողների երեսից փախչելու պատճառով կամ որսի ետև վազելուց: կամ վերջապէս՝ որովհետև կուշտ ճաշ էր վայելել: Քարայրի որջի մէջ նա ապահով էր: որովհետև ծածկուած տեղումն էր: նա շատ խորն էր քնած: քանի որ մկների զուարթ խաղը չէր խանգարում իւր հանգիստը, ապա թէ՛ ոչ պէտք է կարծենք, թէ խաղը խիստ հանդարտ է եղել:

Խաղը հաճութիւն է պատճառում, խաղի ժամանակ ուրախութիւն է երևում, որ եթէ ազմով կատարուի ցնծութիւն է դառնում: Ցնծութեան յափշտակութեան ժամանակ՝ խոհեմութիւնը թուլանում է. այդ ժամանակ վտանգների մասին էլ չեն մտածում: Այսպէս էին և մկները: Նոքա չէին նկատում, թէ մերձ են մի հսեղ գիշակերին, որի բարկութիւնը գրգռելուց անվնաս չեն մնալ: Ցնծութիւնը մինչև անգամ խիղախութիւն է ծնանում: որով մի մուկ յանդգնեցաւ այն ցցուած ժայռի ծայրին վեր ելլել, որի տակ որ առիւծն էր քնած: Բայց աւաղ, որ նորա համարձակ քայլը աղէտալի եղաւ. նա վեր ընկաւ դժբաղդաբար ուղղակի առիւծի վերայ որ և իսկոյն զարթնեց և նորան բռնեց: Անմիջապէս կենդանի կերպով երևակայեց թէ ինչ սոսկալի վիճակ է սպառնում իրան, որ անզգուշաբար խանգարեց առիւծի՝ անասնոց թագաւորի՝ քունը: Մեծամեծները չեն սիրում, որ իրանց անուշ հանգիստը ընդհատեն: Ով որ այդ փորձէ պէտք է գիտենայ որ անպատիժ չի մնայ: Այս բանը քաջ յայտնի էր մկան: Բայց յիշեց և այն մեծանձնութիւնը որ թագաւորաց զարգն է կազմում: Ուստի և աղերսելով դիմում է առիւծի ազնուասրտութեան և ամենայն ճարտարութեամբ ճգնում է հիմնաւոր բացատրութիւններով զօրացնել խնդիրը: նախ գթութեան արժանի է հա-

մարում այն հանգամանքը թէ իւր պատճառած վիշտը գիտութեամբ չի գործուիլ: Միայն գիտաւորութիւնն է պատժելի: Աւելացնում է: Թէ իւր մահը նորան ընաւ ոգուա չը պէտք է բերէ: Անձ պատիւ չէ առիւծի համար: Եթէ սպանէ շնչին մկան, մանաւանդ մեծ վայելք ևս չէ նորանոց կերակրուիլը: Իսկ եթէ շնորհք ստանայ՝ մուկը խոստանում է ընդ միշտ չը մոռանալ շնորհած բարիքը: Այդ խօսքերով թերևս ոչ այնքան փոխաբէն հատուցման մասին էր մտածում, որքան իւր սրտի մէջ երախտագիտական զգացմունքը՝ անջինջ պահելու մասին: Այդպիսի խոստումները առիւծի ծիծաղը շարժեցին, որովհետև իւր կեանքում չէր լսել և չէր փորձել թէ շնչին արարածն էլ կարող է երբեմն մեծակշիռ ծառայութիւն մատուցանել իշխանականին: Այնուհետև նա մի անգամ իւր անզգուշութիւնից ցանցի մէջ ընկաւ: և իւր բարձրաձայն աղաղակով աւելի ևս կարող էր մեծացնել իւր թշուառութիւնը, որովհետև որսորդը այդպէս կիմանար թէ արգէն առիւծը թակարգի մէջ ընկել է: Բայց բաղձը ողորմեցաւ նորանից հեռու չէր այն մուկը, որին որ երբեմն կեանք էր շնորհել: սա ճանաչեց այդ սրտաճմլիկ ձայնը և իմացաւ թէ իւր բարերարը վտանգի մէջ է: Անմիջապէս յիշեց իւր տուած խօսքը և շտապեց օգնութեան տեղը: Բաջ գիտէ իւր անելիքը: և արդարև առիւծը ստացաւ ցանկալի աղաաութիւնը:

Այս առակը ուսուցանում է: Թէ խաղի և խնդութեան ժամանակ ևս շրջահայեաց պէտք է լինել և նոցա հեռուանքները կշռել: Թէ ոչ միայն մեծահոգութիւնը, այլ և երախտագիտութիւնը զեղեցիկ առաքինութիւնն է: Թէ դու պէտք չէ արհամարհես նաև ամենափոքրագունին, որովհետև հանգամանքները այնպէս փոփոխական են, որ գուցէ նա էլ կարողանայ մեծ ծառայութիւն մատուցանել քեզ:

Ծերացած առիւծը

1. Ծերացած առիւծը, որ ի վաղուց հետէ խիստ անագորայն և անգութ էր եղել, անզոր ընկած է իւր որջի առաջ և մնում է մտալուտ մահուան:
2. Այն անասունները, որոնք նորան տեսնելուն պէս միշտ սոսկացել են, հիմայ չեն ցաւակցում, և ո՞վ պէտք է տրամի այն խռովարարի մահուան համար, որի պատճառով երբէք խաղաղութիւն և ապահովութիւն չի թագաւորել:
3. Նորա ընդհակառակ աւելի ուրախացան, որ դազանից վերջապէս պէտք է զերծ մնային, և նոցանից ամանք, որ դեռ մոռացել էին այն բոլոր անիրաւութիւնները, ինչ որ առաջները բազմեցս ստացել

էին, ծարաւում էին նորանից հանել իրանց ոխը: 5. Խորամանգ աղուէսը խոցեց նորան կծու խօսքերով: 6. Գայլը թափեց նորա գլխին չարաչար լուտանքներ. եղը իւր եղջիրներով ծակծկեց. վարազը իւր վրիժակներով վէրքեր տուեց, և մինչև անգամ նոյն իսկ ծոյլ էջը մի հարուած կերցրեց իւր սմբակով: 7. Ազնիւ ձին միայն՝ տեսնելով այդ բոլոր արարքները՝ ինքը ոչինչ վնաս չը տուեց, թէպէտ մի և նոյն թշնամին պատառ պատառ էր արել և նորա մօրը: 8. «Ձեռ կամնայ», հարցրեց էջը, «մի լաւ շոխոց էլ տաս առիւծի ականջների տակը»: 9. Ձին լուրջ մտքով պատասխանեց. «Ցածուկիւն է վրէժտ առնուլ այնպիսի թշնամուց, որ էլ կարող չէ ինձ վնաս հասուցանել»:

Բաց այսպտու թիւն և կենդանացումն. Առակը մեր երեւակայութեան մէջ հանդիսացնում է խիտ անտառի մէջ բացուած մի տեղ: Այդ մերկ տարածութիւնը զառիվայր բլրի մի մաս է կազմում: Գորա վերին սահմանները փահուած է ճեղքճքած ժայռերով, ուր որ մի քարայր առակի մէջ նկարագրած առիւծի՝ որջ է կազմում:

Անտառեցէտ այն անտառները, որոնք այդ որջէ մտարէ տալ հաստուել են:

Գոյս ունիւն դառնութեցէտ, որ միջուկ խոտքը մի կենդան և մի շրջապատ է իւրում: Ծերացած առիւծը կենդան է. գորա առջև կացած աղուէսը՝ գայլը, եղը, վարազը, էշն ու ձին՝ շրջապատ են ձևացնում:

Կենդանի և շրջապատի մէջ մի համարանքն է երևում. փոքրէն և հանդէս հանէն, եւ ինչ խոտէ մտնէ մտն, ինչ դոտ՝ մտն կենդանեաց մտն:

1- Առիւծը ծերացած էր. — միւս կենդանիները՝ առոյգ հասակով:

2. Առիւծը հիւանդ էր. — միւսները՝ առողջ:

3. Առիւծը կեանքից ձանձրացած և մահու պատրաստ էր. — միւսները կայտառ զօրութիւններով և կենսախրախոյս:

4. Առիւծը անզօր ընկած էր գետնի վերայ. — միւսները աշխոյժ և զուարթ կանգուն էին նորա շուրջ:

5. Առաջ նորա ներկայութիւնը երկիւղ էր աղուում և նոքա նորա երեսից փախչում էին. — այժմ անվախ նորա շուրջն են հաւաքուել:

6. Վաղ նա էր վնասում նոցա. — այժմ նոքա են վնասում նորան:

Այս համարանքն է իւրեւցած շարժանքն է կարգիցէտ, և այդ լաւեանով հետեւել բաւերը կարգիցէտ «ծերացած—հիւանդ—կեանքից ձանձրացած—ընկած — երկիւղ ազդող—վնաս տուող»: Ահա և նկարագրութեան սկիզբը. Առիւծից գոյացած կենդանը և նորա չորս կողմի անասուններից կազմուած շրջապատը՝ հակադիր պատկեր էին հանդիսացնում: Այն է՝ առիւծը ծերացած էր, իսկ ընդհակառակ միւս կենդանիները տակաւին զեռու հասակ էին. և այլն:

Երկուստեք մեկ էլ մի հալածարարութիւնն էր: Որոշուցին է կառնուած մի կողմէն—

Ինչ վարձատրու է երևում հալածարարութիւնը: Աղուէտի և միւսների միտքը ցած է, որովհետեւ այդպիսի մտքով ոխ են հանում այն թշնամուց, որ այլ ևս իրանց վնաս տալ չի կարող. ձիու միտքն ընդհակառակ առաջնորդ է, որովհետեւ անարգութիւն է համարում . . .

Այդ բոլոր բացայայտութիւնները մէջը առնելով ամբողջութիւնը կապով շարադրել:

Ընթերցանութեան եղանակի քննութիւն. Այստեղ ընթերցանութեան հիմնական եղանակը պարզապէս է: Միայն երկու կտորներում դա ընդհատվում է: Առաջին անգամ, երբ որ խօսքի թելը կտորվում է այս անդրադարձութեամբ.

« և ո՞վ պէտք է սրտի այն խռովարարի մահուան համար, որի պատճառով երբէք խաղաղութիւն և ապահովութիւն չի թագաւորել:»

Իսկ միւս անգամ հետևեալ հարցմունքով
չէս կամենայ, մի լաւ շուկոց էլ տաս առիւծի ականջների տակը . . .
և այդ հարցմունքի պատասխանով.

ցածութիւն է վրէժ առնուլ այնպիսի թշնամուց, որ էլ կարող չէ ինձ վնաս հասուցանել:»

Անդրադարձութիւնը այն ընդհանուր ճշմարտութիւն է յայտնում, թէ խռովարարի մահուան մասին ոչ ոք չի տխրում: Դորա ասութեան եղանակը այն է, որով մենք յայտնում ենք ինքնին հասկանալի իմաստներ. այսինքն աւելի խոր ձայնով, քան այն բառերը, որոնց մէջ որ դա ներմուծութիւն է կազմում, այլ և փոքր ինչ միաձայն հնչեմամբ կամ առանց եղանակելու: Այդ հնարով միւս նոյն ժամանակ կը պահպանուի և զգալի կը կացուցանուի այն կապը, որով միացած են «չեն ցաւակցում» և «նորա ընդհակառակ աւելի ուրախացան» նախադասութիւնները: Էջի հարցմունքի մէջ լսվում է դարձայն, և իրանոյ, դա կարդացվում է ձայնը միշտ բարձրացնելով մինչև վերջին բառը: Ձիու պատասխանը մի յանդիմանական միտք է:

Թէպէտ դեռահասակ առիւծներ էլ կան, բայց և այնպէս առաջին նախադասութեան «ծերացած» բառը չը պէտք է շեշտուի. իսկ որպէս զի դորա նշանակութիւնը լաւ տպաւորուի, թէ առիւծը երկար տարիներ բռնութիւններ է գործել միւս անասունների դէմ, այդ աւելի որոշ կերպով իմանալի է դառնում «ի վաղուց հետէ» բառերից: Բայց այնուհետեւ «անզոր» և «իւր որջի առաջ» բառերի համար խնդիր է ծագում, թէ գոցանից որը պէտք է շեշտուի: Առհասարակ կանոնը այս է, թէ որպիսութեան որոշումը աւելի է շեշտվում, քան տեղի որոշումը. եթէ մի

առանձին հիմք չը կայ վերջինն աւելի նշանակութիւն տալու, եթէ զոր օր տեղով մի հակադրութիւն չի ցոյց տրվում, քան ինչ որ ընթերցողը կարդալու ժամանակ սպասում է: Մանաւանդ որ առիւծի անզօրութիւնը ամբողջ պատմութեան մէջ նշանաւորաբար հանգամանք է: «Մահ» ունի գլխաւոր շեշտ՝ որովհետեւ «սպասել» բայի լրումն է կաշմում: «Որ ի վաղուց հետէ խիստ անադորոյն և անգութ էր եղել» միջանկեալ նախադասութիւնը՝ ենթակայի որոշիչ մաս է, ուստի և մի փոքր դադար առնելով պէտք է զատել նորանից: Եւ որովհետեւ աւուծը արդէն ինքնին «նորոյն» և «նոր» է, ուրեմն աւելի ուղիղ կը լինի, եթէ գլխաւոր շեշտը տանք «խիստ» բառին, որպէս զի գաղանկութեան բարձր աստիճանը ուշադրութեան առնուի:

Երկրորդ նախադասութեան մէջ կանոնի համեմատ շեշտվում են՝ «տեսնելիս», «սոսկացել են» և «ցաւակցել» բառերը, Հարկ չը կայ որոնք նորան տեսնելուն պէս՝ բառերի մէջ՝ շեշտել, ապա թէ ոչ այն հակադրի գաղափար կը ծնանէ, իբր թէ նորա ուրիշ գաղանկներին տեսնելիս՝ չէին սոսկում:

Մէկի մահուան համար տրամութիւնը ընկան է, բայց մի խոռվարարի համար՝ սովորաբար ոչ մանաւանդ նորա համար ոչ, որի պատճառով «երբէք» խաղաղութիւն չի թագաւորել, «Սաղաղութիւն և ապահովութիւն» չեն կարող շեշտ ունենալ, որովհետեւ ինչ իմաստ որ դորա ծանուցանում են, արդէն «խոռվարարի» մէջ ամփոփուած է:

Նոցա ուրախութեան առարկան էր առիւծի հալածանքներից ազատութիւնը, ուստի և շեշտվում է «երժ բառը»:

Միւս հետեւեալ նախադասութեան մէջ արժանի են մտադրութեան «դեռ» և «առաջները», որովհետեւ դոցանով յայտնվում է այն մի քանի անասունների անշէջ ատելութիւնն ու ոխը, որոնք «յժ» փափագում են իրանց սրտի դառնութիւնը թափել, երբ որ առիւծը արդէն ձերացած, անզօր և մահամերձ է:

Անասունները իրանց դառնութիւնը ինչ տեսակ որ թափում են առիւծի վերայ, ցոյց են տալիս հետզհետեւ սաստկացող աճումն, ուստի դորա համաձայն ևս պէտք է կարդացուին նախադասութիւնները: Հետեւապէս «խոցեց կծու խօսքերով թափեց լուտանքներ, ծակծկեց, վէրքեր տուեց» բառերը գլխաւոր շեշտ կառնուն: Իսկ «և մինչև անգամ նոյն իսկ ծոյլ էշը մի հարուած կերցրեց իւր սմբակով» նախադասութեան մէջ պէտք է նշանուի ոչ թէ ատելութեան յայտնելու եղանակը, այլ նոյնը յայտնող կերպով, որովհետեւ այդ ակնարկութիւն է անում նոյն իսկ՝ բառը և ամբողջ նախադասութիւնը ուզում է հասկացնել թէ չը նայելով իւր ծուլութեան՝ էշն էլ չը դիմացաւ, որ առիւծի վրէժը չը հանէ, «Ծոյլ» բա-

ուր չի կարող գլխաւոր շեշտ ստանալ որովհետեւ դա նկարագրում է էջի ծանօթ բնութիւնը, այսինքն ոչ հակադրութիւն է ծանուցանում և ոչ մի զարմանալի հանգամանք է որոշում: Աճուրդ դադարում է էջի հետ: «Ազնիւ ձին միայն . . . և իւր մօրը» բարդ նախադասութեան մէջ՝ երկրորդական նախադասութիւնը պարունակում է տեղի տալը (Թէպէտ) տեղի տալը միշտ կարգացվում է յետոյ Բաժնից: Աւագ նախադասութեան մէջ «իսկ և ոչնչ» իսկ երկրորդական նախադասութեան մէջ միջ բլիսաւոր շեշտ ունին: «Միայն» բառը ցոյց է տալիս, թէ ձին միակ կենդանին էր, որ վրէժխնդրութեան մասին բնաւ չէր մտածում, ուստի և չը թշնամանեց, թէպէտ առիւծից ամենամեծ անիրաւութիւն էր կրել, որովհետեւ նորա գազանութեան էր մասնուել իւր մայրը:

Հարցման և պատասխանի խօսակցական ձևից յետոյ «հարցրեց էլը—ձին լուրջ մտքով պատասխանեց» նախադասութիւնները՝ իրանց պատմողական եղանակով՝ աւելի աննշմար են մնում, Հարցման մէջ «էլ» բառը գլխաւոր շեշտ ունի. նորա իմաստն է՝ դու էլ ուրիշներին պէտ: Ձիու պատասխանի մէջ շեշտերի աստիճանաւորութիւնը կը գտնենք, եթէ այն բարդ նախադասութեան տանք հետեւեալ պարզ նախադասութեան ձև:

«Անզէն թշնամու դէմ վրէժխնդրութիւնը՝ համարում եմ ցածութիւն», այստեղ աւագ շեշտը ցածութիւն, բառն ունի. նորանից թոյլ է վրէժխնդրութեան շեշտը, և աւելի ևս թոյլ «անզէնի» շեշտը, Այս բանից հետեւեցնում ենք, թէ այնտեղ ցածութեան» հետ պէտք է շեշտուին նմանապէս վրէժ առնել և վնաս հասուցանել, բառերը, բայց ամենից աւելի առաջին բառը:

Արամազդ եւ ոչխար.

Ինչ չարիք որ ասես՝ ոչխարը կրում էր ամեն տեսակ կենդանիներից վերջապէս նա եկաւ Արամազդի մօտ և աղաչեց, որ վերջ դնէ իւր թշուաւութիւններին:

Արամազդը դժկամակուած երեւեցաւ, բայց իսկոյն ասաց ոչխարին. Յիրաւի անմեղ արարածս, տեսնում եմ, որ քեզ չափից դուրս անպաշտպան և անզէն եմ ստեղծել, Հիմա ինքդ ընտրիր և ասա, ի՞նչ դարման անեմ, որ սխալս ուղղուի: Արդեօք կուզենաս, որ բերանդ սարափելի ծանիւրներով և ոտքերդ սուր ձիրաններով սպառազինեմ:

«Ոչ, ոչ», ասաց ոչխարը, «ես չեմ ուզում զիշատիչ գազանների կարգը մտնել»:

«Կամ» շարունակեց Արամազդը՝ «արդեօք լորձուկքիդ մէջը չը խառնեմ թոյն»:

«ՈՏ» ընդմիջեց ոչխարը. «Թունաւոր օձերը սաստիկ ատիլի են»:

«Հապա ք'նչ անեմ: Ե՛կ, ճակատիդ եղջիւրներ բուսցնեմ և ճնօտներիդ պողպատի պնդութիւն տամ»:

«Եւ ոչ այդպէս» գթառատ հայր, ապա թէ ոչ նոխազի պէս խեթկող կը դառնամ»:

«Բայց լաւ մտածիր» ասաց Արամազդը, «դու էլ վնասելու կարողութիւն պէտք է ունենաս, եթէ ցանկութիւն ունիս, որ միւսները քեզ վնասելուց ետ քաշուեն»:

«Էլ ուրիս ձոր չը կայ» հառաչեց ոչխարը, «Թո՛ղ ուրեմն, Տէ՛ր, որ մնամ, ինչպէս որ եմ: Որովհետեւ վնասելու կարողութիւնը, չը լինի՞ թէ վնաս կամենալու սէր զարթեցնէ. աւելի լաւ է անիրաւութիւն կրել, քան գործել անիրաւութիւն»:

Արամազդը օրհնեց ոչխարի անմեղութիւնը, իսկ սա այդ ժամից մոռացաւ իւր արտունջները:

Առակի ձևափոխութիւն. Հետեւեալ խնդիրների բացայայտութիւն տալուց յետոյ կը պատրաստուի այն ձևափոխութիւնը, ինչպէս որ ստորև առաջ է բերուած.

1 Տոյց տուր, թէ ոչխարը անպաշտպան է, մի առ մի յիշատակելով՝ ցուլը, խոյն, նոխազը, եղջերուն գայլն ու վագրը, ձին:

2 Թուիր զանազան կենդանիներից նորա ստացած չարիքները, զոր օրշնից, նոխազից, անգղից, գայլից:

3 Ի՞նչ արտունջ և ք'նչ խնդիր է յայտնում նա Արամազդին:

4 Սկզբում Արամազդը ք'նչպէս է ընդունում ոչխարի արտունջն ու խնդիրը, յետոյ ինչ համոզման է գալիս:

5 Ի՞նչ առաջարկութիւններ արեց Արամազդը ոչխարին:

6 Ի՞նչ պատճառներով ոչխարը մերժեց դոցա:

7 Ձևակերպիր Արամազդի «կամ այս—կամ այն»—ը:

8 Ոչխարի ընտրութիւնը և այդպէս վճռելու պատճառը:

9 Վախճանական արդիւնք:

Ոճով արտայայտութիւն. Կենդանեաց մէջ ոչխարը բոլորովն անզէն ստեղծուեցաւ Արամազդի ձեռքով: Նորա ճակատը ցլի, նոխազի, խոյի և եղջերուի պէս եղջիւրներով չէր զինած. նորա բերանը ատամներով չէր շարած, որ թշնամիներին վախեցնելու համար բաւական է նոցա ցոյց տալ, ինչպէս որ գայլն ու վագրը անում են. նա իւր օտքերի մէջ ոչ ոյժ էր ստացել, որով ձին գետինը տրոփում է և ոչ նորա վերայ մագիլներ՝ յարձակողներին վիրաւորելու համար, Ուստի և հին ժամանակներից կատակների ու թշնամութեան նիւթ դարձաւ. Հունը չարախնդութեամբ տեղից տեղ հալածում էր և սիրում էր տեսնել նորա փախն ու փախուստը. նո-

խազը իւր պողերով էր տալիս նորան. անգղը օդի բարձրութիւններից իջնելով բզկթում էր. արիւնխաւանձ գայլից ոչ մի տեղ ապահով չէր, Այսպէս եկաւ Արամազդի առաջ. տրտունջ յայտնեց իւր թշուառութեանց մասին և աղաչեց, որ թեթևացնէ այդքան զրկանքները:

Արամազդը նախ դժկամակեցաւ ոչխարի վերայ, բայց փոքր ինչ մտածելուց յետոյ իրաւունք տուեց, թէ արդարև նորան խիստ անզէն է ստեղծել և պատրաստ է սխալը ուղղել: Իւր առաջարկութիւններով երեք ելք ցոյց տուեց. կամ պէտք է ոչխարի բերանը հասրկու ատամներով և ոտքերը ճիրաններով սպառազինէ, կամ նորա թքի մէջ թոյն խառնէ, կամ նորա ծնոտներին ոյժ տայ և ճակատի վերայ եղջիւրներ բուսցնէ:

Սակայն ոչխարը այդ երեք առաջարկութիւններից և ոչ մէկին հաւանութիւն չը տուեց, Սուր ատամներից և զօրեղ մագիլներից վախեցաւ գիշատիչ դառնալ, թքի մէջ թոյնը, կարծում էր նա, այնպէս ատելի կը դարձնէ, ինչպէս որ են օձերը. իսկ ճակատի եղջիւրներով դիւրաւ կը սասանայ նոխարի խեթկող բնութիւնը:

Այս բոլոր բացայայտութիւններից յետոյ՝ երբ որ Արամազդից և այնլսեց, թէ այն ժամանակ միայն կը կարողանայ իւր թշնամիներին սասանել, երբ որ ինքն էլ ընդունակ լինի ուրիշներին վնասել — հառաչելով խնդրեց Արամազդից, որ եթէ ուրիշ ձար չը կայ, իրան էլի այնպէս թողնէ, ինչպէս որ արդէն է, Որովհետև՝ վնաս տալու կարողութիւնը, վախենում է, թէ սեր կը ծնանէ վնասներ կամենալու համար, իսկ աւելի լաւ է անիրաւութիւն կրել, քան անիրաւութիւն գործել:

Եւ Արամազդը օրհնեց անմեղ ոչխարին, իսկ օտ այդ ժամից թող տուեց իւր տրտունջները:

Շուն և գայլ

Մի օր իւր նախիրը արածելիս հօգիւր քնել էր, Այդ բանը տեսաւ գայլը և սկսեց բոլոր ծիգը թափել. որ փութով արթուն շներին մի կողմը գրաւէ, և ինքը այսպիսի յաջող դէպքից օգուտ քաղէ:

Եւ հ. սիրելի թուլայ, ասաց գայլը, «դու բոլորովին մաշուեցար, այդ ինչ դառը կեանք ես վարում. հաւատա՛, ինձ զարմացնում է այդքան համբերութիւնդ և անդդուելի հաւատարմութիւնդ: Օր ու գիշեր միայն նախիրդ երջանկութեան համար ես հոգս քաշում. միթէ շարունակ արթնութիւնը քեզ չի՞ յոգնեցնում»:

«Յօգնե՛մ, ասում ես պարտք կատարելը ամենևին չը պէտք է յոգնեցնէ»:
«Ճշմարիտ է», ասաց կեղծաւորը, «բայց իւր պարտականութեան մշտական սարուկ ո՞վ է դառնում: Տես, տերդ, ինչպէս առօր փառօք քուն է

մտնել. դորա օրինակը իսկ քեզ պէտք է խրատէ, որ շատ էլ բարեխիղճ չը լինիս, և քիչ էլ քո մասին մտածես:

«Հէնց որովհետև ինձ վստահանալով՝ տես Տանգիստ է», պատասխանեց Տաւատարիմ Թուլան, «աւելի ևս իրաւունք չունիմ անփոյթ Թողնել պարտականութիւնս»: Այս խօսքերից յետոյ սկսեց այնպէս բարձրադաղակ հասել, որ հովիւը զարթնեց, և սորա հետ միացած իւր հին Թշնամու շար գիտաւորութիւնը ի դերև հանեց:

Գիւրին գործ է փորձութիւններին դիմանալը, եթէ մարդու սրտի մէջ արթուն է հաւատարմութեան և արդարակորովութեան ոգին:

Անմիջապէս ըմբռնուած և կրկնութիւն: Գուցէ հարկաւոր լինի կանխաւ բացատրել հետևեալ խօսքերը՝ յաջող դէպքից օգուտ քաղել. պարտականութիւն. անդրդուելի հաւատարմութիւն. բարեխիղճութիւն. կեղծաւոր. անփոյթ Թողնել. ի դերև հանել. ստրուկ:

Բացայայտութիւն և կենդանացումն: Երևակայենք ամառուայ մի շոգ օր. Արեգակը հասարակածի բարձրութեան վրայ է և ուղիղ ճառագայթներով այրում է հովուի մէջքն ու երեսը: Ազդ առաւօտունից նա արդէն ոտքի վերայ է և իւր նախրի հետ ի միասին մեծ մեծ տարածութիւններ է չափել: Այսպէս նա շատ յոգնել էր: Հասաւ մի դաւարագեղ ըլրակին, «ը կանաչ խոտի բարձրութիւնը հանգստեան հրաւիրեց նորան, նա չը դիմացաւ և մեկնուեցաւ դետնի վերայ, ոչ թէ քնելու, այլ փոքր ինչ շունչ քաշելու համար. բայց մնալիւ յաղթեց նորան և նա մրտաւ խոր քնի մէջ: Այլ մերձաւոր անտառում մի գայլ է շրջում, որ հովուի քունը նկատելով սողաց նախրի կողմը—Հիմա դուք շարունակեցէք:

1 Գայլի մերձաւոր և հեռաւոր դիտողութեանց մասին.

2 Ի՞նչ խօսքերով է յայտնում նա իւր կարեկցութիւնը.

3 Ի՞նչ է զարմացնում գայլին.

4 Ամփոփիր գայլի յայտնած սկզբունքները.

5 Գայլը կեղծաւոր.

6 Ի՞նչ են շան սկզբունքները.

7 Շունը հաւատարիմ է մնում.

8 Գայլը գայթակղիչ չէ, այլ միայն փորձիչ:—

(Հաս հատ առականքի քննութիւնը վերջացուցինք. այժմ տեսնենք, թէ շրջակայքերէն ո՞րպիսի նորանոր և պիտանի վարժութիւններ են կաղմում):